ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ԱՅՍՈՒՀԵՏ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ

02.03.2018 12:31

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 01.03.2018թ. թիվ 106-Լ որոշմամբ «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» **կարգում** (**այսուհետ՝ Կարգ**) կատարված փոփոխություններով սահմանվել է փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի տրամադրման կարգը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 01.03.2018թ. թիվ 107-Լ որոշմամբ սահմանվել է փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի ձևը և նկարագիրը:

Փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտը փաստաբանին տրամադրվում է կամավորության սկզբունքով, **միայն դիմումի հիման վրա**՝ քարտի արժեքի փոխհատուցմամբ:

ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏՆ ԱՆՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է՝

- առաջին անգամ փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու մասին դիմում ներկայացրած փաստաբանի հավակնորդին.

- 2018 թվականի մարտի 1-ի դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբաններին՝ **Պլաստիկ քարտ ստանալու մասին դիմումը մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը (ներառյալ) ներկայացնելու դեպքում:**

Պլաստիկ քարտ ստանալը փաստաբանին չի զրկում իր վկայականը և արտոնագիրը զուգահեռ օգտագործելու իրավունքից:

Բեռնել «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգը.

*** *Կարգի վերջին ինկորպորացիան՝ 01.03.2018թ. դրությամբ***

Բեռնել փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի ձևը և նկարագիրը.

Բեռնել փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստի քարտ ստանալու մասին դիմումի ձևաթուղթը.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })